

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի
Antoine de Saint-Exupéry

ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳԱԶՈՒ
PILOTE DE GUERRE

Ֆրանսերենից թարգմանեց Նուշանիկ Թամրազյանը
Traduit du français par Chouchanik Thamrazian



ՀՏԴ 821.133.1-31Սենտ-Էքզյուպերի
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Ս 403

Սենտուան դը Սենտ-Էքզյուպերի

Ս 403 Ռազմական օդաչու/ Սենտուան դը Սենտ-Էքզյուպերի.- Եր.:
Էդիթ Պրինտ, 2018.- 180 էջ:

«Ռազմական օդաչու» վիպակն ստաջին անգամ լույս է տեսել 1942 թվականին, Միացյալ Նահանգներում՝ «Flight to Arras» («Թռիչք դեպի Առաս») վերնագրով՝ կայծակնային արագությամբ համաշխարհային հռչակ բերելով հեղինակին: Վիպակն ինքնակենսագրական է: Մահաբարձր մի ստաբիլության պատմությունը, որ ներկայացվում է անձնակազմի օդաչուի՝ Սենտուան դը Սենտ-Էքզյուպերիի հայացքով, դառնում է ֆրանսիացի մրավորականի, արվեստագետի, շարքային քաղաքացու սպրտամենի, խորհրդածությունների խրատումը Երկրորդ աշխարհամարտի համապատասխան: «Տարօրինակ պատերազմի» մասին բազմաձայնող աշխարհը մի պահ արիպված էր թե՛լ ի վրես անմիջական մասնակցի խոր, անհերքելիորեն ճշմարիտ վկայության:

ՀՏԴ 821.133.1-31Սենտ-Էքզյուպերի
ԳՄԴ 84(4Ֆր)-44

ISBN 978-9939-75-241-9

Տվյալ թարգմանության հեղինակային թացատիկ իրավունքը պարկանում է «Էդիթ Պրինտ» հրատարակչությանը, գրքի պատճենահանումը, համացանցով պատածումը, ստեղծ գրաբերակի պնդումը խստիվ արգելվում են:

© Էդիթ Պրինտ
© Շուշանիկ Թամրազյան (թարգմանության համար), 2018

*Հրամանագրար Ալիսահին, օղային ուժե-
րի 2/33 Հեղափոխական գնդի իմ բոլոր
ընկերներին, մասնավորապես՝ հեղափոխոյ
կապիտան Սիրոյին և լեյտենանտներ
Ազամբրին և Դյուրերպրին, որոնք, իրար
հերթազայելով, իմ ողեկիցն են եղել 1939-
1940-ի մարտերի բոլոր ռազմական թոխը-
ների ժամանակ, ու որոնց հավատարիմ
ընկերն եմ ես ցմահ:*

1

Երևի երագում եմ: Քոլեջում եմ: Տասնհինգ տարեկան: Համբերատար լուծում եմ երկրաչափության խնդիրը: Արմունկներս հենած սև գրասեղանին՝ հմտորեն բանեցնում եմ կարկին, քանոն, անկյունաչափ: Ջանասեր ու հանգիստ աշակերտ եմ: Ընկերներս կողքիս խոսում են ցածրաձայն: Մեկը թվեր է շարում գրատախտակին: Մի քանիսը՝ ավելի անլուրջ, տարված են թղթախաղով: Ժամանակ առ ժամանակ ես ավելի եմ խորասուզվում երագներիս մեջ՝ պատուհանից դուրս նայելով: Ծառի ճյուղը մեղմ օրորվում է արևի լույսի տակ: Երկար նայում եմ: Ես ցրված աշակերտ եմ... Հաճույքով եմ վայելում այդ արևը, ինչպես աշակերտական սեղանի, կավճի, գրատախտակի մանկական բուրմունքն եմ ըմբռնում: Ինչ ուրախությամբ եմ պատսպարվում մանկության ապահով այդ աշխարհում: Ես գիտեմ, սկզբում լինում են մանկությունը, քոլեջը, դասընկերները, հետո գալիս է այն օրը, երբ քննությունն ես հանձնում: Ավարտական վկայական ես ստանում: Սրտատրոփ հատում ես այն շեմքը, որից դուրս արդեն տղամարդ ես: Այդ պահից քայլերդ ավելի ծանր են դառնում երկրի վրա: Դու քայլում ես քո ճանապարհով: Առաջին քայլերդ ես անում: Վերջապես գենքերդ կփորձես իրական թշնամիների դեմ: Քանոնը, անկյունաչափն ու կարկինը կօգտագործես աշխարհ կառուցելու կամ թշնամիներին հաղթելու համար: Վերջ, խաղն ավարտված է:

Ես գիտեմ, որ սովորաբար քոլեջի աշակերտը չի վախենում կյանքի հետ առձակատելուց: Անհամբերությունից դժվոր է տեղում: Չարչարանքը, վտանգները, հասուն կյանքի դառնությունները չեն վախեցնում նրան:

Բայց, արի ու տես, որ ես տարօրինակ աշակերտ եմ: Աշակերտ, որ լիովին գիտակցում է իր երջանկությունը և այնքան էլ չի շտապում կյանքի հետ առձակատել...

Դիտերտրոն է անցնում: Կանչում եմ նրան.

-Նստիր, թուղթ խաղանք...

Ես երջանիկ եմ, որ ինձ հաջողվում է գտնել նրա ազգավի մեկնոցը: Դյուտերտըը նստած է իմ դիմաց՝ սև գրասեղանի ետևում, ճիշտ և ճիշտ իմ սեղանից, նստած է՝ ոտքերը ներքև կախած: Ծիծաղում է: Ես համեստորեն ժպտում եմ: Պենիկոն միանում է մեզ ու ձեռքը դնում ուսիս.

-Դե ինչ, ծերուկ:

Աստված իմ, որքան քնքշանք կա այդ ամենի մեջ:

Վերակացուն (բայց արդյոք նա վերակացո՞ւ է...) դուռը բացում է ու կանչում տղաներից երկուսին: Թողած կարկին ու քանոն՝ նրանք ոտքի են կանգնում ու դուրս գալիս: Հայացքով հետևում ենք նրանց: Քոլեջն ավարտված է նրանց համար: Այսօր մենք նրանց դեպի կյանք ենք ճանապարհում: Տղաների ստացած գիտելիքը կծառայի ինչ-որ բանի: Նրանք, տղամարդու պես, հակառակորդի վրա կփորձեն իրենց հաշվարկները: Տարօրինակ է այդ քոլեջը, որից հետո յուրաքանչյուրը գնում է իր ճանապարհով: Եվ առանց հանդիսավոր հրաժեշտների: Նրանք նույնիսկ չնայեցին մեր կողմը: Բայց կյանքի պատահականությունները նրանց գուցե Չինաստանից էլ հեռու հասցնեն: Շանտ ավելի հեռու: Կարո՞ղ են նորից հանդիպելու երդում տալ իրար քոլեջից հետո, երբ կյանքը մարդկանց սփռում է աշխարհով մեկ:

Մենք գլուխներս կախում ենք. մենք, որ դեռ ապրում ենք ինկուրատորի ապահով անդորրում...

-Լսիր, Դյուտերտը, այս երեկո...

Բայց մի երկրորդ անգամ է դուռը բացվում: Ու հնչում է՝ իբրև դատավճիռ.

-Կապիտան դը Մենտ-Էքզյուպերի և լեյտենանտ Դյուտերտը, հրամանատարի մոտ:

-Քոլեջն ավարտված է: Դա կյանքի օրենքն է:

-Գիտե՞իր, որ մեր հերթն է:

-Պենիկոն այս առավոտ է թռել:

Երևի հատուկ հանձնարարության ենք մեկնում, եթե մեզ կանչում են: Մայիսը մոտենում է ավարտին, մենք հիմնովին տրվել ենք նահանջին, աղետին: Ջոհաբերում ենք մեր ինքնաթիռները, ինչպես ջրով լի բաժակը շուտ կտաս հրկիզվող անտառի վրա: Ինչպես կշռել վտանգը, երբ փլուզվում է ամեն ինչ: Ամբողջ Ֆրանսիայի համար մենք դեռևս օդային հետախուզության հիսուն անձնակազմերն ենք: Երեք հոգուց բաղկացած հիսուն անձնակազմ, որոնցից քսաներեքը մեր՝ 2/33 գնդում: Երեք շաբաթում մենք կորցրել ենք քսաներեք անձնակազմից տասնյոթը: Մեր ուժերը հալվում են մոմի պես: Երեկ ես ասել եմ լեյտենանտ Գավուային.

–Դա միայն պատերազմից հետո կերևա:

Եվ լեյտենանտ Գավուայը պատասխանել է.

–Դուք, այնուամենայնիվ, պատերազմից հետո կենդանի մնալու հույսեր եք փայփայում, պարոն կապիտան:

Գավուայը չէր կատակում: Նրանք ելք չունեն, ստիպված են մեզ նետել այդ վիթխարի խարույկի մեջ, նույնիսկ եթե դա լրիվ անօգուտ քայլ է, մենք դա գիտենք: Հիսուն ինքնաթիռ՝ ամբողջ Ֆրանսիայի համար: Մեր ուսերին է ֆրանսիական բանակի ռազմավարության ողջ բեռը: Կրակի բոցերում հրդեհվող վիթխարի մի անտառ, ու կրակը հանգցնելու համար ընդամենը մի քանի բաժակ ջուր, որ պետք է զոհաբերել, որ կզոհաբերվեն:

Դա ճիշտ է: Ո՛ւմ մտքով կանցներ բողոքել: Բացի «Լավ, պարոն կապիտան: Այո, պարոն կապիտան: Շնորհակալություն, պարոն կապիտան: Ճիշտ այդպես, պարոն կապիտան»-ից երբևէ որևէ խոսք հնչել է մեր բերանից: Բայց մի տպավորություն կա, որ գերակայում է ավարտին մոտեցող այս պատերազմում: Անհեթեթության տպավորությունը: Ամեն ինչ կործանվում է մեր շուրջ: Ամեն ինչ ջախջախվում է: Ու դա այնքան ամբողջական է, համատարած, որ մահն ինքնին թվում է անհեթեթ: Այդ խառնաշփոթի մեջ մահը դարձել է անլուրջ մի բան...